

Եւ ահա ԿԱՐՄԻՐ ՔՍԱՆՍՄԵՍԿԲ այն ահաւոր օրերուն՝ որոնց համար մարդկային բառ ու բան կը պակսի թափելու համար դժոխային անէծքի վիժանք մը մոլորդին ու ժամրոտ՝ ըիւր անգամ աւելի սիաւոր քան արդար Յոթինը:

Ո՞հ, ինչպէս մոռնալ այսքան աղջտ, այսքան զարիւրանք, այսքան դառն ու ահաւոր խողխողում: Ո՞քան ալք ու անդունդ ցափ եւ կսկիծի մեր սրտերուն մէջ՝ պատառներ անոնց պատառ պատառ սրտերուն. ինչպիսի արցունքներ միմուռ եւ այի մեր ըիւրելուն վրայ՝ ըեկելեկ նշոյներ անոնց անոյշ ըիւրելուն խաւարած... Յիշենք որ զգանք, զգանք որ արտասուենք անոնց համար, անհուն սիրով եւ անբաւ կարօտով... Ո՞հ, թանւ կագին են այդ արցունքները անոնց համար՝ որ բնութեան զաւակ, հայրենի հողին սիրահար, իրենց բազումներով, իրենց քրտինքով ամենաբեր դրախտ էն յօրինած զայն:

Կապուած Հողին՝ որ ցեղային աւագինութիւնն էր մեր հայրերուն, փարած Գրին ու Խաչին՝ որ կտակն էր մեր Նախնեաց, կ'ապէին ու կ'երագին երկնքէն տրուած ու քռնաւորներէ խրուած ազատութիւնն իրենց ցեղին, ազատութիւնը՝ իրենց հայրերու հողին, իրենց կեանքին, իրենց զաւակներուն:

Եւ սակայն, ովք անաւոր եւ անթափանցի խորիւրով Նախախնամութեան, անոնք խողխողուեցան եղեռնագործներու պէս. ոչ ոք, ոչ գժաց անոնց՝ որ մէն, միայնակ դիմագրաւեցին իրենց զարիւրելի ճակատագըին. իրենք դիտեցին իրենց օրհասը ու յօրինեցին ու երգեցին երգերու ամէնէն թախծագինը իրենց մահաքոյր Խափօրին մէջ՝ որ կ'երթար դէպի գերեզմանն անյայտ ու անժանօթ: Միապատն ու նողմեր եւ երկնքի թռչուններ միայն լսեցին անոնց կտակը՝ որ կը թրթռայ դեռ օդին մէջ, որ կու գայ կ'ընդհարի մեր սրտերուն, արինով ու արցունքով լեցնելու զանոնք:

Բայց մեր ցափ ովկեանին մէջ չմոռնանք անոնց օրինութիւնը՝ որ մեր սրտի բալասանն է, լոյսը՝ մեր մուայլ ուղիներուն: Չմոռնանք թէ անոնք մեռան՝ չուրանալու համար ինչ որ իրենց յոյն էր եւ մեր ապագան: Ոչ սպառնալիք եւ ոչ մահ չկրեց անոնց ճակատը, չարատաւորեց անոնց խիղճը, չճալեց անոնց ծունկերը պաշտելու աստուած մը՝ որ իրենց Հայրերունը չէր: Մնոնք իրենց անհուն ցափն մէջ անհունապէս զօրաւոր զգացին ինքինքնին ցեղին փառքով, հայ կրօնքի սրբութեամբ, իրենց սերունդին փարումով: Համբոյր այն հոգիներուն, համբոյր այն ճակատներուն որ դիւցազնօրէն մեռան՝ թոյլ չտալով որ մարդախոշոշ գազաններ կողոպտեն ու կոխոտեն դժոխային քըքիջով իրենց պատիւր, իրենց ազգն ու կրօնքը:

Ու անոնք իրենց անհուն ցափն մէջ երգեցին. «Թոյլ մեր մահն հաւասարի քաջ նահատակներու մահուան, ու մեր արինը խառնուի վիրաւորներու արեան...» ու իրենց ցեղին եւ կրօնքին գիտակցութեամբ համարձակ գոչեցին մարդասպաններու երեսին. «Այս հաւատքէն ոչ ոք կրնայ մեզ խախտել. ոչ իրեշտակ եւ ոչ մարդիկ, ոչ սուր ոչ հուր, ոչ ջուր. քեզմէ տանջանք, մեզմէ ալ յանձնառութիւն. դու սուր ունիս, մնոք ալ պարանոց...» ու ինկան Անմահին համար, իրենց ու իրենց Ցեղին անմահութեան համար...

Այսողորմ սպանիչները պահ մը կարծեցին թէ մեզ անճիտեցին, չքացուցին երկրիս երեսէն, եւ սակայն կանք ու կ'ապրինք մենք նշխարներ նահատակներու, նահատակներու կտակը կատարելու. կայ ու կ'ապրի արեան ծովին մէջ, Հայ Գողգոթայի վրայ մեռած ու յարուցեալ փոքր եւ մեծ Հայատանը՝ ուր կը թռչի ամէն սիրտ տարագիր, ուր կը ծիլ ամէն յոյս եւ ամէն ժափտ Հայութեան:

Յաւէտ օրինութիւնն Անմահներու յիշատակն, յաւէտ երանութիւն եւ փառք մեր Նահատակներուն, որոնց արինը մեզ կը սրբէ, կ'ազնուացնէ ու կը սորվեցնէ ապրիլ ու մեռնիլ Հայ Ցեղին սիրով, Գաղափարի եւ Անմահութեան համար:

ԽՄԲ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

ԿԸ ԴԱՌՆԱՅ Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ

(Շաբ. տես «Բազմավէպ» 1935, էջ 55)

13. — Բանասէրք զԽորենացին տեղափոխելու համար՝ մեծապէս յեցան նա եւ անոր Ողբին վրայ: Բատ Հ. Ակինեանի՝ նա ի սկզբան գրուած ու յարած է եղեր Ղեւոնդի պատմութեան, և ապա փոխագրուեր Խորենացւոյն ծայրը, առանց վերջարանի թողլով նախորդը¹: Զամինեան ուզեց՝ որ յօրինուած լինի առանձին 604ին, և նախ քան Խորենացւոյն պատմութիւնը, և յետ իբր 150 տարւոյ (ուրեմն գրեթէ 704ին) կցուած անոր՝ «մի անճարակ գրագէտի ձեռքով²», որ սակայն բնաւ չէ տեսեր արեգական լոյսը: Մանանդեան չընդունեցաւ Հ. Ակինեանի կարծիքը, — Զամինեան իրեն անձանօթ է մնացեր, — համոզուած՝ թէ «Խորենացու Ողբը գտնուում է բատ իս իր իսկական տեղում» (130), բայց միշտ թ դարսուն՝ պատմչին հետ: Իսկ ես կ'ըսեմ՝ թէ երեք տեսութիւնքդ ալ անչիմն են, և կը հերքուին հետեւեալ փաստերով:

ա. Ողբն այնչափ հին է՝ որքան Խորենացւոյն Պատմութիւնը, և զայս կը հաստատէ դարձեալ Աղուանից պատմիչը, որ 669ին տեսեր է զայն, և Մովսեսի Պատմութիւնին առած տեղեկութեանց հետ կոչեր է բառացի անոր վերնազիքն ալ, որ Խորենացւոյն քով այսպէս է. «Ողբը վասն բառեալուրութեանն Հայոց յազգեկ Արշակունեաց, և Կայիսկուպասեառութեանն ի ցեղէ (կամ յազգէ) սրբոյն Գրիգորի». և Կաղանկատուացւոյն քով՝ «Աստ բարձաւ թագաւորութիւնն յԱրշակունեաց, և հայրագետութիւնն ի ցեղէ սրբոյն Գրիգորի» (Ա, գ):

բ. Ոչ միայն քան զԱղուանից պատմիչը կանուխ էր Ողբը, այլ և մասն Խորենացւոյն Պատմութեան, ինչպէս է գեռ այսօր: Մեր հին պատմագիքը, օրինակ Կորիւն, Եղիշէ, Ղազար և այլք, իրենց գործերը կ'աւարտեն մաղթողական փառատրութեամբ մը, ինչպէս բոլոր հին ս. Հարք կ'ընէին: Խորենացին նոյնալէս կը վերջացնէ Ողբը. «Յորմէ պահեսցէ զմեզ Վրիստու Աստուած, և զամենեսեամ ոյք երկրպագեն հմաձնարտորեամբ. և նեսա փառք յամենայն եղականաց. ամեն»: Ողբ զատելով Ողբը Պատմութենէն, վերջինս կը մնայ առանց փակման: Նոյնալէս մնացեր է Ղեւոնդ եւս: Բայց նախ՝ իրաւունքն ստացողին է. և յետոյ՝ Ողբը սերտիւ կապուած է Մովսեսի Պատմութեան հետ, և մէկ մասին մէջ ուղղակի անոր ամփոփումն է, որով անոր կը պատկանի, ինչպէս պիտի տեսնենք այժմ. իսկ Ղեւոնդի շարագրածին հետ բնաւ աղերս չունի:

գ. Խորենացին Տրդատայ սպանման առթիւ աւ ունի «ողբերգական մեղաղորութիւն» մը (Բ, զբ), որոյ և Ողբին մէջ կայ զուգակցութիւն գաղափարաց, ինչպէս նա եւ յատուկ բառեր Ողբին ու Պատմութեան մէջ, հաստատելով՝ թէ երկունքն ալ նոյն գրչին են, ինչպէս պիտի մատնանը շենք ստորեւ՝ համեմատութեան մէջ:

դ. Ողբին գրութեան նիւթն ու ժամանակը ճշգելու համար՝ զայն պէտք է նկատենք իւրեմնի ամրաղջուրեան մէջ, և ոչ թէ քաղ հանելով ու բռնազրուելով անոր մը կամ

1. Անձնաւ, 1930, 75: — 2. Անդ 1931, 127:

երկու կետերը, և մնացեալը թողլով իւր բախտին, ինչպէս վարուեցան այլք, և որով կարելի է ամէն զրուած ամէն դարու պատշաճեցնել։ Ոխալ զրութիւն է այդ։ Մեր Ողբն ուրեմն իւր ամբողջութեան մէջ կը պատկանի միայն Ե դարուն, ինչպէս կէտ առ կէտ պիտի ցուցնեմ անոր մեկնութեան մէջ։

և. Իւր նիւթն էր ըստ վերնագրին՝ Արշակունի ու Գրիգորեան տոհմելուն բարձունքն Հայաստանէն։ Գիտել կու տամ' որ Խորենացւոյն Պատմութեան և այլոց հետ համեմատութիւնը կը նշանակեմ կոչումներով կամ գլուխներով։

սղբ ըսուածը կը յօրինուի կորստեան մը
վրայ՝ որ դեռ թարմ է, և սրտին վէրըը
բաց. ուստի և ժամանակակցէ մը։ Այդ-
պիսիք էին Շնորհաւալոյն՝ Եղեսիոյ, և Գր.
Ծղային՝ Երուսաղեմի ողբերն ալ։ Արդ՝ ո՞ր
զգայուն սիրտն էր՝ որ Արշակունի ու Գրի-
գորեան տանց կորստեան վրայ՝ յետ եր-
կու, երեք կամ չորս դարերու պիտի նստէր
«արտօսը» թափէր, կամ Ե գարուն ա-
պրած Մեսրոպայ մահուան համար «անձ-
կաւ հեղձամղձուկ» լինէր, ինչպէս Յակոբ
Մանանդեան կը պահանջէ. մի թէ Մես-
րոպ դարերով ապրելո՞ւ էր՝ իւր ապագայ
անձանօթ ողբերգուդ հեղձամղձուկ չընելու
համար։ Իսկ եթէ զիջանինք վայրկեան
մը – զրիչդ նիւթ ունէր Զ-Թ դարերէն
մին, այդ շրջանի ո՞ր թագաւորաց վրայ
կ'ողբար արդեօք։ Այդպիսի տարօրինակ
ողբասաց մը կարելի է երազել՝ նստած
զրասեղանին առջեւ. բայց գտնելը՝ զը-
ժուարին։

զ. Երբ վերնագիրը կ'ըսէ՝ թէ Ողբը նուիշը ուստած է Արշակունեաց և Գրիգորեանց ջնջման, բնականապէս նկատուած իրենց տխուր հետեւանօք հանդերձ, տարրական ողջմտութիւնը կը պահանջէ՝ որ վերնաշը բովանդակութեան մէջ գտնուէր միտութիւն նպատակի և նիւթի. և այդ միտութիւնը պահելու էր՝ երբ զայն յօրինողն հետագայ ոմն իսկ լինէր, և ուզէր ինք զինքն Եղարու կարծեցնել: Արդ՝ ո՞ր հանժանէր ոռուառն առ վերնաօրին ներքեւ,

ի բաց ընկացիկն», զի իրեն հետ ազգատիւած ալ զմկուեցաւ թագաւորութենէն. «և նախ քան զմանուն մեռելորդիւն՝ անփառութեամբ յարուսյն ի վայր կործանեալ», ինչպէս պատահեցաւ իսկ, կոչուելով Փարսից գուռն, ուր Վասմ առաւ թագն իւրմէ, և հրամայեց «անդէն արգելու զնա, և զամենայն ինչս ազգի նորա ունել յարցունիս» (Պ, կդ): Արշակունի ու Գրիգորեան գահերուն այս աւերման կը վկայէ և Փարակցին, և յայտնի բաներ են:

« Ողբրմիմ քեզ, և կեղեցի Հայաստանի իրրեացեալ ի բարեգարդուրենի քեզին » ուր կը պերճանային Սահակ ու

Մեսրոպ. «ի քաջն զրկեալ ի հովուր և ի հովուակցէ», որ էին նոյն վարդապետք: Եւ որոց կենսազրական տեղեկութեանց կ'անցնի՝ յարելով. «Երանի՛ առաջնոյ և երկրորդի փոփոխմանն», որոց մին է Վասարապուհ և Խոսրով արքայից գահընկալութիւնը (թ. 392 և 414), և որոյ հետ անընդուժջաբար կապուած է հետեւեալն ալ. «զի ինձ ժամանակ հեռանարդ փեսային» Սահեր ինձ ժամանակ հեռանարդ փեսային» Սահակայ, որ նոյն առաջին և երկրորդ առթիւ ի Տիսփոն զնաց՝ յիշեալ անձինքը թագաւորեցնելու համար, ու շըով դարձաւ (Գ, ծա, ծե), որով արժանի երանութեան: Եւ կը յարէ՝ ակնարկելով հեռանալոյն «և փեսայիրին» Մեսրոպայ, որ նոյնպէս մեկնեցաւ Հայաստանին ուրախալի նպատակներով. մին ի Միջազնութեանց գրոց գիւտին առթիւ, և միւսն ի Բիւզանցիոն իրը պատուիրակ (Գ, ծգ, ծէ): Այս երանելի առաջին փոփոխումն էր:

«Գարձեալ միեւ երբեմն ուն (Սուլըմակ) սեղեխաբար (այս ինքն հակառակ օրինաւաւոր հայրապետին) յանդենալ յարձակեցաց յանարաւառ առաջաւատ՝ (յափշտակելով աթոռը), և հարսիդ ոչ աղտեղացար, (չյարեցար անոր), բեկետ և բանուրիւն (Պարսից) զիհեսային (Սահակ) ի բաց վարեաց» աթոռէն մինչեւ ի Ցիսփոն, «որդոցն բարձրացելոց (որ էր անոր անլող հայ աւագանին) ահարգելով զծնողն (հմմտ. Գ, կդ, կդ), համայն և խորքցն (որ են նոյն իշխանը՝ ապա անարգելով ու մերժելով) բատ արձանեացն զօտար հայրն (Սուլըմակ) և զեկամուտ յօրայն (անոր յաջորդող թրբիշոյ ասոսին. Գ, կդ), սակայն դու յայեմ.

ասորիս. թ, զբ), ապայս թ և յ զըկ ամայի բորբոքել ցուցեր, զանդրեն բո-
յոյն (հօր՝ Սահակայ) յուստով դարձ (Տիս-
փոնէն՝) հովուակցաւն» Մեսրոպաւ, ինչպէս
պատահեցաւ իսկ՝ հանդերձ օտար աթո-
ռակցով մը, որ էր Շմուէլ (Փ, կէ). բայց
«ոչ որպես տայգերբ», ինչպէս այդ իշխա-
նակիցն էր, որ տագեր դիրքն ունէր հայ-
եկեղեցւոյ համար, «այլ որպես նոյնազա-
ռակ զուգահարր՝» կամ մի և նոյն զաւա-
կաց երկու հայր ունելով՝ յանձին նոյն
բնիկ վարդապետաց, «զմանկուն փայ-

լեզուաբանութեամբ սանձահարեցէք. այլ նիւթ նոցա անմոռութեանն զձեր ուսումնատեացդ տալով բարս, բորբոքեցէք առաւել քան զհնոցն բարելովնի» (Բ, զբ):

Ի դարձին յաջորդեց Վարդանանց պատերազմը, անկմամբ կամ գերութեամբ մեր քաջազանց, որմէ ծնաւ ահաւոր վիճակ մը՝ պարսիկ բռնութեան ներքեւ: Հօս ողբասացը կը յիշէ Հրէից փրկիչներն՝ որ իրարու կը յաջորդէին, մինչ Հայաստան անտէր և անպաշտան մնացած էր, և կը յարէ այլափոխութեամբ. «Անտիոքոս (Յազկերտ) բռնադատէ բողոք զօրենս հայրենիս, և Մատարիա (Վարդան և այլ պաշտպանք) ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ շորէ պաշարէ», զի տեւեց յետ ճակատամարտին ալ (Եղիշէ, Ե), «և Մակարէ ոչ փրկէ». որովհետեւ Վահան Մամիկոնեան գեռ ուշ պիտի բարձրացնէր սուրբ: «Որհաշիրք ի հերանսաց (Պարսից), և մարտք ի հերձուածողաց, և խորհրդականն (Մեսրոպ) չէ ի միջի՝ որ իրաւոր և յարմարէր ի պատերազմ» հակառակ հերծուածոց, ինչպէս ըսաւ և վերեւ. ուր կ'երեւի՝ թէ նեստորականք սկսեր էին գործել, որոց դէմ յետոյ պիտի ճակատին բարգէն կաթողիկոս և այլը¹: «Զրանառ հօտ... ցրուեալ անսպատաց և զահալիժորեանց». Եղիշէի ըսածին պէս՝ թէ «հասեալ ունէին զամուրս անսպատին և զանիսար տեղիս բազում լերանց» (Ե): «Զի բազառորք (Պարսից) տիրեւարք ի չարաչարք, բեռինս բառնարակի տանը և դժուարակիրս, հրաման տարով անուանելիս», որ Եղիշէի ըսածն է. «Ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսացութիւն ու առաջարկութիւն» (Պ, զբ):

թեամբ վերջացաւ). յօտարորիւն վտարումն ազատաց՝ (մեր աքսորական խումբն յԱպար), և անրիշ նեղուրիւնի ուամկաց. առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց. բոլորը ծանօթ Եղիշէի ու Ղազարայ նկարագրութեանց մէջ:

Յետոյ կը ցուցադրէ բարոյական ծանրանկարգութիւնը՝ որ կը տիրէր կղերական և աշխարհական զամերու մէջ, արդիւնք քաղաքական պղտորութեանց: «Վարդապետ տիմարք և ինքնանամբ, անձամբ առաջարիւրիւ... արծարով լենարայ», զոր կը հաստատէ և Ղազար՝ ըսելով. «Իսկ անձամբ զանձն յաղնեցուցանել ի վարդապետութիւն, որպէս և զբազում տեսանէի յանպիտանաց,... զոր Պարսիկը և արք անարժանք գործեն և այսօր», տալով անոնց նոյն պատիւը կաշոռով (587): «Կրօնառորք կեղծառորք, անձնացոյցը, սեափառք, պատուասէրք քան թէ աստուածանքը». և ըստ նոյն Փարապեցոյն, «Չիցն արդեօք աբեղեանս Հայոց արժանի ողբոց արտասուաց և բազում սգոյ, համբաւել զանպիտանս, խօսել առ նախանձու զանարժանս» եւն (577), որոց լեզուին դէմ Խորենացին ալ բողոքեց վերեւ: «Վիճակառորք հապարտք, դատարկակացը, զրաբարք, ծոյրք, տանցողք արուեստից (հմտ. «իմով ամենիմաստ արուեստիւ», Գ, կը) և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգուրեանց», և որոյ արձագանքն է հետեւեալը. «Ի հաւատոյ և յուսմանէ տգէտք երեւին, և ի գործս ծոյլը և անծոյք. յորոց ըստ անզիտութեանն՝ որ է ի նոսա, և ըստ անկարգ վարուց» եւն (Փրպ. 585):

Ողբը կ'անցնի աշխարհական գասուն մէջ սպրզած զեղծմանց. «Ժողովրդականք վեր, ստահակը, մեծախօսք, անվաստակը, արդեցողք, վիճակարք, փախցողք ի ժառանգանելէ». և ըստ Ղազարայ՝ «Եր այնուհետեւ տեսանել յաշխարհիս Հայոց զամութիւն հեռացեալ, զիմաստութիւն կո-

1. Հմտ. Կարեւոր խմդ. հայ եկեղ. պատմ. Վ. ենեաթիկ,
1927, 358 եւն:

ըուսեալ, զբաջութիւն հեռացեալ և մեռեալ» (336): «Զօրակամբ անարիք, սեափարծք, զինատեացք, պղերզք, հեշտասէրք, անմուժկարը», կրկնուած միւսէն այսպէս. «Եւ որ երբեմն քաջանուն զօրքն Հայոց ի մէջ այլոց զօրացն ամենայնի երեւէին, և զօրագլուխը անուանիք և յաղթողք, ապա ծաղք էին ամենեցուն և կատականք» (անդ): «Իշխանք ապատամբք, զոդակիցք գուղց,... յափշտակողք, աշխարհաներք» եւն. Փարապեցիէն ալ կը յիշուին «անպիտան իշխանք ժամանակին» (337), «որոց ոմանք լեռնախոյզ աւազակաց ի մէջ անցեալ, ուրացութեամբ վերտէին» (336): «Դաստանրք տմարդիք, սուտք, խարողք, կաշտառուք, սերիստուղք իրաւաց, անհաստատք, հակառակողք», զոր կը գտնենք նաեւ թէ. Մանդակունոյն քով՝ այսպէս. «Ոմանք թիւրեն զիրաւուն այրույն ի դատաստանի, և ակն առնուն ի շքեղ երեսաց, խոտեալք և արհամարհեալք կաշտուք անօրէնութեան» (իլլ.): Միով բանիւ՝ «աստուածպաշտուրիւն մոռացեալ, և ակեկարիւն զենեեի»: Ղազարայ ըսածին պէս՝ թէ «զբրստոնէութիւն թաքուցեալ» կը տեսնէին (336): Այս վկայից նկարագրած ժամանակն հեռի չէր խորենացոյն ողբացածէն, և անոր շարունակութիւնն էր. մանաւանդ թէ զայն իսկ կը շօշափէ Ղազար՝ երբ կը խօսի անցելոյն մասին: Եւ այդ բարոյական խանգարմանց վրայ կը բարդուին բնութեան պէսպէս անհարթութիւնը եւս. «Գարուն երաշտացեալ, ամսան անձրեւայոյզ,... հոդմք բքարտք, խորշակարք... այլ և սասանուեիք և դղրդմուեիք» եւայլն:

15. — Ահաւասիկ ամբողջ Ողբն իւր պատմական մասանց մէջ, որ կ'ընդգրկեն Վասամշապէոյ զահակալութենէն (392) մինչեւ Ապարի աքսորականաց դարձին (463) մօտ, կամ իրը 70 տարիներու շըրջան մը, զոր ողբերգուն ամփոփելու ժամանակ որպէս ականատեսն՝ միշտ ներկայ կը նկատէ. և զոր չէ կարելի փոխազրել այլուր ամբողջութեամբ, և ոչ ալ մասամբ՝ առանց բռնազօսելու և խեղաթիւրելու

իմաստը: Այսպէս վարուեցաւ Գարագաշեան¹, տալով Ողբին մեկնութիւն մ'ըստ համոյս, առանց հետեւելու բառական իմաստին, և պատշաճեցնելով զայն «մանաւանդ առաջնոյ կիսուն Եղարուն» (63). և միանգամայն անոր «Երանի առաջնոյ և երկրորդի փոփոխմանն» բացարուութեան մէջ նշմարելով և իրարու խառնելով ո. Ներսիսի ու Սահակայ ժամանակներն և հայրապետական աթուին վրդովումներն անոնց օրով (64): Կղերին բարոյական խանգարման միանգամայն անոր «Եղարուն» (630-660). և կամ՝ «Եթէ ունի այն պատմական յարմարութիւն թիւրեն այսպէս և Յաղաքը հիացմամբ կը խօսին»: Այլ պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն, և կամ ը գարուն առաջնին կիսուն միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ խարխափեկ առանց որոշ անցին կիսուն միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ խարխափեկ առանց որոշ անցին կիսուն միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն, և կամ ը գարուն առաջնին կիսուն միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն թիւրեն այսպէս և Յաղաքը հիացման միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն, և կամ ը գարուն առաջնին կիսուն միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն թիւրեն այսպէս և Յաղաքը հիացման միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն, և կամ ը գարուն առաջնին կիսուն միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն թիւրեն այսպէս և Յաղաքը հիացման միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն, և կամ ը գարուն առաջնին կիսուն միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն թիւրեն այսպէս և Յաղաքը հիացման միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն թիւրեն այսպէս և Յաղաքը հիացման միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը մէջ գործածուած այս լեզուն՝ քննել և լուսաբանել չէր, այլ աշխարհակի դասը, որոյ մասին Եղիշէն ու Ղազար «հիացմամբ կը խօսին»: Այս պաշաճած տեսաւ Ողբն «Եղիշէ և յաջորդաց» ժամանակին (թ. 630-660). և կամ՝ «Եթէ ունի Ողբն այն պատմական յարմարութիւն թիւրեն այսպէս և Յաղաքը հիացման միայն կը յարմարի» (64-8): «Քիննական պատմութեան» մը

Յոհաննէս սիւնական, որ սակայն նստաւ քաղկեդոնական բաժնին մէջ՝ ընտրութեամբ իւր հօտին և իրեւ հարազատ հայր, ոչ եթէ Եղիվարդեցւոյն տեղը, ինչպէս Սուրմակ ու Բրգիշոյ ըրին: Իսկ բարգառորդ՝ Ապրուէզ և Մօրիկ հալածող հայ հակաքաղկեդոն դաւանութեան: Իրեն համար «պարզ չեն» միայն ամենապարզ «զէքն իմ մանուկ թագաւոր» և այլն, որ գուցէ Զ դարուն ապրող արշակունի և հայ գահուն թեկնածու «մի ոմն պատանի է եղած». ուր Ողբը կը խօսի արդէն գահակալ և «յաթռոյն ի վայր կործանիալ մանուկ թագաւորի» մը մասին, որ ծանօթ դէմք մ'է, և ուրիշի հետ չի շփոթուիր. կէտ մը՝ որ ինքնին կը բաւէ քննադատին ամբողջ կարկատանքը քանդելու: Եւ հաւատաց՝ որ իւր այս մեկնութեամբ «շատ մութ կէտեր են պարզուում», մինչ իրապէս իւր զիւտը կրօնաշունչ տպաւորութեան մ'արդիւնք էր լոկ, և ոչ ինչ չէր ըսեր յօգուտ պատմութեան:

Հ. Ակինեան Ողբը տեղափոխելու համար՝ կպաւ անոր բնական արհաւրաց, որոնք «773-774 տարւոյն դէպքերն են», ըսաւ, պատահած ասորական Միջազետաց մէջ, նկարագրուած Թել-Մահրացի սուտն Դիոնեսիոսէ, և ակնարկուած մերս Դեւոնդէ: Նոյն շրջանին կը պատկանին նաեւ Ողբին մէջ յիշուած քաղաքական պայմանք. միայն թէ Ողբը «կրած է մանր փոփութիւններ». կամ հարկ է կրել տալ, որպէս զի հնարաւոր դառնայ տեղափոխութիւնը: Բայց աւելի զարմանալին, «ամբողջ ողբը», այդ ճշգրիտ պատկերն Եւ դարուն՝ զոր տեսանք, «անախրոնիզմ» մը» կը դառնայ յաչս իրեն՝ նոյն շրջանի համար. «անոր բովանդակութիւնը չունի որ և իցէ առընչութիւն Եւ դարու առաջին կէսի դէպքերուն հետ». և կղերին դէմ պարսաւը՝ թարգմանչաց հասցէին և անտեղի կը գտնէ²: Ես կը հաւատամ՝ որ պատմական տեղին էր, փլաւ. զի շարժ խստագոյն

1. Անահիտ, 1931, Սեպ. 126-32: — 2. Անահիտ, 1929, Խոյ. 73-75: — 3. Ալիշան, Հայոց. յունի. 1679: կերծ պիտի տեսնէ: Խորենացւոյն Ողբին

եղեւ, վասն որոյ և տունք՝ որք ի ներքոյ նորա՝ ի շարժէ անտի փլան» (28): Հայաստանի զետինը նուազ անհանդարտ չէր և ոչ Եւ զարուն. և Եղիշէն Միանձանց խրատուն մէջ նկարագրելով ինքն եւս Խորենացւոյն ողբացած ցաւալի շրջանը, յայտնապէս կը շեշտէ և այդ պարագայն. «Երկինք ի վերուատ բարկացեալ են, և երկիր ի ներքուատ կայ յերերի տատանման. շինուածք մեր եղեն զերեզմանք զիականց մերոց, և վաստակը ձեռաց մերոց տապալեցան ի վերայ մեր. պայթեաց և պատառեցաւ թանձրութիւն երկրիս, և բազում մարդիկ ի վայր հոսեցին»: Արդ՝ մի թէ Խորենացւոյն արգելուած էր տեսնել և յիշել ինքն եւս այդ աղէտը, որով մեր հարկազրուինք զայն ականատես ու վկայ տանել յետնագոյն շարժելու:

Բայց Եղիշէն Եւ զարու մէջ: Զայն տեղափոխելու բազմագիրտն աշխատութիւնը զեռ կը շարունակուի. և կը համարիմ՝ թէ գէթ մինչեւ ցաւարտումն իրաւունք ունինք հինգերորդին մէջ փնտուելու: Սակայն առանց անոր ալ արդէն ուրիշ ժամանակակից մը՝ Յովհ. Մանդակունին՝ կը վկայէ նոյն բնական երեւութից՝ իրեւ Հայոց ընտանի բաներու, ըսելով. «Ապա թէ և այնպէս ոչ ապաշխարեմք, կամ փակէ (Աստուած) զերկինս ի վերայ մեր դժնդակ երաշտութեամբ, կամ բանայ չարաչար յոլովութեամբ յապականութիւն. ապա թէ և այնպէս ոչ ապաշխարեմք, շարժեալ զերկիր՝ զողացուցանէ ի ներքոյ մեր» (իլլ.):

Մեր Ողբին տրուած բոլոր հակառակ մեկնութիւնք, կը կրկնեմ, մտացածին բաներ են, և շատ հետի անոր հարազատ ու բերդովն ու պարսպով հանդերձ, և անրաւ կործանումներով ու մահերով ուրիշ վայրերու մէջ եւս³: Մեր աչերով չտեսանք ինքնինականի քանդումներն ալ: Անցնելով հնագոյն դարերուն, Յովհ. Մամիկոնեան կը կրած 602ի սասանութիւնը. «Ի նոյն կը յիշէ 602ի սասանութիւնը. «Ի նոյն ամի սուրբ կարապետն՝ որ յիննակնեան տեղին էր, փլաւ. զի շարժ խստագոյն

ա. Խորենացւոյն Պատմութիւնն և Ողբը վերնագրովն հանդերձ՝ կային արդէն լ և թղարերու ծանօթ զետնաշարժերէն կանուխ, և նախ բան Աղուանից պատմիչը՝ որ զանոնք տեսեր ու զործածեր է 669 թուին, և պատմահօր կարծեցեալ աղբիւրներէն յա-

ռաջ (աստ' 64, 119): — բ. Ողբին իմաստն ուղիղ մեկնելու համար՝ պէտք է նկատել ու ընկել զայն իւր ամբողջութեան մէջ (119): — գ. կը պահանջուի՝ որ անոր բովանդակութիւնն համաձայն լինէր վերնագրին, ինչպէս և է իսկ (120): — դ. Նոյնը վերնագրին հետ ամբողջապէս կը պատշաճի Եւ դարուն միայն, ինչպէս տեսներ կէտ առ կէտ: — ե. Նոյնն յայտնապէս կապուած է Խորենացւոյն Պատմութեան հետ՝ բովանդակութեամբ ու յատուկ բառերով անգամ (120), և մին միւսէն օգտուեր է անվրէպ, ինչպէս ցոյց տուաւ համեմատութիւնը: — զ. Օգտուողն եղեր է Ողբը, ոչ Պատմութիւնը. վասն զի պատմական անցքերն Ողբին մէջ լոկ մթին ակնարկներ են, որոցմէ չէր կարելի պատմութիւն հանել, մինչ Պատմութեանէն Ողբը կը հանուէր. որով և քան զայն յետոյ է զրուեր: — կ. Խորենացւոյն այդ գործն ողբերգուին դրաւոր ուղղակի և միակ աղբիրն է եղեր. վասն զի Ողբին մէջ կան պատահարներ՝ որ հօն միայն կը գտնուին, և կորիւն կամ Փարացելին չեն յիշած. ինչպէս Սահակայ առաջին ուղեւորութիւնք ի Տիսփոն, և Մեսրոպայ զործակցութիւնն անոր հետ՝ յետ աթոռոնկեցութեան (121): — ը. Ողբասացն Եւ զարու աղետից ականատես ու վշտակոծ սիրտ մը միայն կրնար վնել (120): — թ. Գրեր է յետ Վարդանանց պատերազմին, որով անտի ծնած քաղաքական ու բարոյական աւելումներն ալ տեսեր ու կը նկարագրէ (122): — ժ. Ողբը ճշգութեամբ յապականութիւն. ապա թէ և այնպէս ապաշխարեմք, շարժեալ զերկիր՝ զողացուցանէ ի ներքոյ մեր» (իլլ.):

ա. Խորենացւոյն Պատմութիւնն և Ողբը վերնագրովն հանդերձ՝ իմաստով, բայց ոչ ծեւով. հետեւարար բոլորովին անկախ իրարմէ: յա. Փէտք է ուրեմն՝ որ նոյն Եւ զարուն յօրինուած լինի Ողբին աղբիւր եղած Պատմութիւնն եւս: — յի. Ոչ միայն նոյն զարուն, այլ և նոյն ժամանակ ու նոյն զրչէն, վասն զի Ողբը մասն ու կնցում է Պատմութեան (119): — զ. Պատմութիւնը կ'աւարտի Սահակայ ու Մամիկոնի մահամատամբ, համոզելով զմեկ՝ թէ պատմիչն իսկապէս աղբիր անոնց, ինչպէս կը վկայէ, և որով անոր պատմահօր կարծեցեալ աղբիւրներէն յա:

յատկապէս. և է ծանօթ Մովսէս Խորենացին (59): — Ժ. Խակական ապաժամութիւնք որ կան անկասկած ու կ'երեւին Պատմութեան մէջ, յետամուտ են զաղափարողաց ձեռամբ (57, 63): — Ժե. Վաւելը ականութեան այս բոլոր փաստերը կը զօրանան նաեւ հեղինակին կենսագրութեամբ, զոր քիչ յետոյ կը տեսնենք:

16. — Նախ քան զայդ հարկ է գնել
և լուծել խնդիր մը. Խորենացւոյն Պատ-
մութիւնը՝ զոր ունինք այսօր, ամբո՞ղջ է
թէ թերի: Ինքն իսկ կը զգացնէ երեք զը-
րոց զլուխներով՝ թէ աւելի չէ զրած.
«Ծննդաբանութիւն Հայոց մեծաց. — Բան
միջակ պատմութեան մերոցն նախնեաց. —
Աշարտաբանութիւն մերոց հայրենեաց»:
Եթէ աւաբարանութիւն, ուրեմն մնաց
հօդ. և ինչպէս տեսանք (119), Ողբն ալ
մատենին կնքումն է և շարունակութիւն
չի ընդունիր: Վերջընթեր զլիսոյն մէջ եւս
խօսելով ս. Սահակայ մասին, կ'ըսէ՝ թէ
«զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ
անցանել բանիւ՝ ըստ արժանի հօրն դը-
րուատից. այլ զի մի յերկարութիւն ճա-
ռիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց,
այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ
թողցուք՝ արտաքոյ այս զրոց» (Ք, կէ),
որով ուրեմն կ'աւաբան Պատմութիւնը:

Սակայն թողվ. Արծըռունին կը վկայէ՝
թէ Մովսիսի պատմութիւնը կը խօսէր
«յԱզամայ մինչեւ ի կայսը Զենոն» (թ.
474-491). և թէ ապրեր էր 120 տարի,
«որպէս զրեալ աւանդեցաւ մեզ այս, կ'ը-
սէ, ի չորրորդ դրուգի խոստաբանեալ
պատմութեանն Մովսեսի Խորենացոյ, վե-
րադարձութեան ի վերայ երկոցունց գը-
րուագեալ հատուածին, զոր և երանելին
կորիւն ուսումնակից Մովսեսի... յիւրումն
ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ
մեզ հաւատարմացուցանէ» (82): Խմաստն
է՝ թէ չորրորդ դրուազը վերադարձ կամ
ընդլայնում մ'էր նախընթաց երկու գը-
րուագաց, ինչպէս ինքն Խորենացին խոս-
տացած էր զրել. և թէ չորրորդին բովան-
դակութեան մասին խօսած էր և կորիւն:

Հ. Ալիշան այդ բացատրութեամբ ու-

զեց իմանալ «իբր երկրորդ իմ պատմութիւն¹»։ Աակայն ծանը հակասութիւններ կան Թովմայի տեղեկութեանդ մէջ։ Եթէ չորրորդը վերադարձ մ'էր նախորդ երիցուեց վրայ, այն ժամանակ ինը երրորդ լինելու էր, ոչ չորրորդ։ և մեք երեք զրուագ ունինը արդէն։ Դարձեալ՝ եթէ վերադարձի բովանդակութեան մասին զրեք է և կո-

ըիւն, պատմչիս նկաթը Մեսրոպայ վարքն
էր, որ Խորենացւոյն կրտսրդ գրոց մէկ
մասն է արդէն, և որոյ մէջ բնաւ վերա-
դարձ չկայ նախորդ գրոց վրայ: Պար-
ձեալ՝ Թովմա յետ այդ զեկուցման ունի
գլուխ մը Վարդանանց շրջանի մասին, զոր
կ'ըսէ՛ թէ ընդուներ է Արքահամ խոստո-
վանողի աշխատութենէն (88). յետոյ
ուրիշ զլսով մը կ'ամփոփէ շատ համա-
ռոտիւ Ե գարու երկրորդ ու ծանօթ կէսը,
որոյ մէկ մասը միայն տեսաւ Մովսէս.
որով Թովմա ոչ ինչ ունի իւր քով յատուկ
Խորենացւոյն չորրորդ գրուագին: Ակներեւ
է՛ որ Արծրունոյն բացատրութեան մէջ կայ
օտար ու խառնակիչ ձեռք մը, և Մովսէ-
սի պատմութիւնն ամբողջ է:

17. - Վերակազմենք այժմ անող կեն-
սագրութիւնն ալ՝ իւր և ժամանակակիցի
մ'օգնութեամբ :

ա. Հայոց Պատմահայրը մեզ կը ներ-
կայացնէ իւր անձը, բայց ոչ անունը, որ
« Մովսէս Խորենացի » է պատմութեան
գլուխը, թէպէտ հին զրչագրեր չկան. նոյն-
պէս Սերէոսի քով (կասկածելի. աստ' 64).
« Քերթողահայրն Մովսէս՝ » կաղանկա-
տուացւոյն, « Մովսէս տիեզերահոչակեալ
քերթողն » կամ « Մովսէս Խորենացի՝ »
Թոով. Արծրունուոյն (82), նոյնպէս « Մովսէս
Խորենացի՝ » Յովհ. պատմագրի (Ժ.Գ.), և
« Մովսէս քերթողացն հայր » կամ « Մովսէս
Տարօնեցի » Ասողկայ գրչին ներքեւ (Ա.ա, ե):
Ազուանից պատմութեան մէջ և այլուր
Խորենացի մականուան չգոյութիւնն ու
միւս Տարօնեցի մակդիրը տարակուսել կու-
տան անոր հնութեան վրայ:

Կը հանդիսանայ՝ ինչպէս ըստնք՝ իբրեւ

աշակերտ Սահմակայ ու Մեսրոպայ, որոնք «ծնան զիս, կ'ըսէ, իւրեանց վարդապետութեամբն և սնուցին»։ և յատկապէս Մաշթոցի, առ որ յատուկ խանդաղատանք մ'ունի (աստ՝ 121)։ Այս հաշուով՝ նա կը լինի այն «դաս մի մանկաւոյ» ըսուած խմբէն, որ զրոց գիւտէն երկու տարի վերջ՝ 406 թուին՝ յատկապէս ընտրուեցան ու դաստիարակուեցան¹, յաջորդելու համար երիցազոյն աշակերտաց։ և անոնց պէս իրենք ալ բարգմանիչ կոչուեցան (աստ՝ 60)։ Այդ երկու դասերէն զատ ուրիշ բարգմանիչներ չունեցաւ Եղարք։ և այս զգալի է նաեւ Մովսիսի յօտարութիւն երթալու ժամանակէն, յետ որպէս այլ եւս թեամբ «առ օտարաց (Պարսից) թագաւորութեամբն» (Ա, իբ)։ Այդ պայմանաց ներքեւ իսկ չվարանեցաւ ազգասիրաբարհայ զրականութեան ի սպաս զնելու իւր արուեստը, վարելով կեանքն «անպարապի թարգմանութեանց» (Գ, կէ)։ Արշարունեաց գաւառին եպիսկոպոսաց ցուցակին մէջ տեղ մը տրուած է նոյն «ցերթողահօրն երանելոյն Մովսեսի եպիսկոպոսի», որ ի միասին կը հովուէր զբագրեանդ ալ²։ և զոր պատմչին հետ զուգեց կԱսողիկ(Ա, ե)։ Շարագրեց իւր պատմութիւնն եւս «ծերացեալ և հիւանդոտ» հասակին մէջ (Գ, կէ), այն ատաղձով՝ զոր մեծ մասսամբ զրոյն հաւաքած ու միասին բերած էր։

ուրիշներ չեն յիշուիր՝ նոյն պաշտօնն ու մակղիբը ժառանգած։ Այսպէս երբ առաջին աշակերտը յետ Եփեսոսի ժողովոյն (431/ն) դարձան ի Հայս իրենց ուսմանէն, վարդապետներն զՄովսէս և ընկերներն ալ կը յդեն յԱղեցսանդրիա, կամ «առ այլս առաքելով՝ աճեցուցանել» իրենց զիտութիւնը (աստ` 121), և հմտանալու «իշեղու պանծալի» Յունաց։ Այդ երթն ըստ տեղեկութեան պատմչին շուտով կը յաջորդէ նախորդաց դարձին, ուստի ոչ ուշքան 432 թուականը։ Եւ նա կը նկարագրէ իւր ուղեւորութիւնը, երկար թափառութեանով քաղաքէ ի քաղաք և մինչեւ Հռոմ՝ ողջունելու Պետրոսի ու Պողոսի գերեզմանները (Պ, կա, կը)։ Ասոր ապացոյց է արդէն իւր ծանօթութիւնն ալ բազմաթիւ օտար մատենագրաց՝ զորս կը յիշէ, արդարացնելով իւր բացարութիւնը՝ թէ կը դառնայի «իմով ամենիմաստ արուեստիւս և կատարելազոյն յարմարութեամբս» Պ, կը)։

Եւ զրեց զայն ի խնդրոյ «Սահակայ Բագրատունոյ», որ «ուսումնաւէր» (Ա, զ), տեղեակ ու մեծարող մ'էր անոր հըմտութեան, և որուն կ'ուղղէ պատմիչն առաջին զլուխը, ինչպէս և ակնարկներ յընթացս պատմութեան³, իւր մեկենասին մէջ նշանակութեանը (Ա, ա), և զարմացած անոր «ընդ մտացն ծննդականութիւն» (Ա, զ)։ Տակալին երիտասարդ էր, ինչպէս կ'ըսէ՝ «մանկականի քայոյ տիոց»։ և իւր ընտանութիւնն անոր հետ՝ համարձակութիւն կու տար իրեն՝ անոր «անհասութեան խակութեանդ» վերագրելու փաղաքօրէն՝ պատմութեան մէջ հին առասպեկներ խառնելու բաղձանքը (Ա, լ)։ Որդի քան մերձաւոր ժամանակի Տիրոց իշխանին, որ մեծ պատերազմին մէջ Վասակեանց կողմն էր, պիտի յաջորդէր անոր ու սրբէր իւր տոհմին վրայ ձգուած այդ մուըը։ Եւ Մովսէս իւր Պատմութիւնը կը թողու անոր «յանման յիշատակ՝ քեզ կ'ըսէ» (Ա, լ)։

Երբ հասաւ, վախճանած էին վարդա-
պեաները (440ին). այնպէս որ իւր բա-
ռակայութիւնը կը տեւէ ոչ պակաս քան
ութ տարի։ Տեսաւ վարդանանց պատե-
ազմն՝ աղետալի հետեւանօք, զոր ողբաց
աստ' 122)։ Միանգամայն իւր գէմ գտաւ
ախանձու հակառակորդաց «յանդկնու-
թիւնն» և արհամարհանքը (աստ' 121).
ստիպուեցաւ այդպէս ապրիլ գառնու-

1. Կորիկն, 9. — 2. Հ. Ալեքսան, Այրարատ, 56. —
 3. Ա., զ, ս, լը, Գ, կե հւն, — 4. Հանդ, ամս. 1887, 12:
 — 5. Պ. Փրոց. եւ գործք Անրիկ. 112:

նշխարաց զիւտին (աստ' 62), որ հանդիպած
կ'ըսուի վահանայ մարզպանութեան օրով,
զրաւ 486-490 թուականին, յետ Փար-
պեցոյն. իսկ Ողբը՝ «նախ քան զպատե-
րազմն վարդանանց¹». յետոյ Պատմու-
թիւնը տարաւ մինչեւ 495-500, կամ
լաւ եւս Զ դարու առաջին տարիներուն,
չընդունելով որ անոր մեկենասը լինի Փար-
պեցոյն յիշած Սահակը²: Կ. Բասմաջեան՝
Ողբին նշանակեց 440, և Պատմութեան՝
իբր 490 թուականը³: Հ. Ակինեան եթէ
հաւանէք Խորենացոյն հնութեան, և Պատ-
մութեան խնդրող ճանաչէք Սահակ մարզ-
պանը, զրութեան թուական պիտի սահ-
մանէք 481-483⁴: Կոնիթիր ընդունեցաւ
«աւանդութեան ըսած ժամանակն իբր
460ին⁵»:

Իսկ մեք ենթազրութեանց սահմանէն դուրս գալով, աւելի վստահօրէն կրնանք որոշել զայն, նոյն ինքն պատմչին տուած փաստերով։ Նա կը զգացնէ՝ թէ վարդանանց անկմամբ Հայաստան անտէր մնացած էր՝ երբ կը զրէր (աստ՝ 122)։ Թէ տեսած էր նա և Բ Պերողի գահակալութիւնը 459 թուին (աստ՝ 62). և թէ երբ պատմութիւնը կը փակէր Ողբով, տակաւին կը տեւէր «յօտարութիւն վտարումն ազատաց» յԱպար (աստ՝ 122), որոնք պիտի դառնային 465ին։ Կը հետեւի՝ որ Մովսէս շարագրեց 459-465 թուականաց միջեւ, և Պատմութիւնն և Ողբ ի միասին, ինչպէս հաստատեցինք (125)։ Եւ եթէ իւր աշակերտ ընտրուելուն կամ 406 թուին կար հաւանօրէն աւելի քան տասնամեայ, պատմազրութեան ժամանակ արդէն իրը եօթանասնամեայ էր, որով կրնար ինք զինքը «ծերացեալ և հիւանդու» անուանել։ Յետ դարձին ի հայրենիս՝ իւր գործօնէութեան ասպարէզ ունեցաւ մինչեւ Եղարու երրորդ քառորդը, քան զոր աւելի կարող չէր ապրիլ մարդկօրէն իւր տկար վիճակով, և առասպել էր թով։ Ուրծուն անոր վերազրած 120 տարին (աստ՝

1. *Գլեասկը*, Բ., 10-16, 21. — 2. *Արտիկ*, 1898, թ.
192. — 3. *Հեղ. ամս.* 1891, 363. — 4. *Աբահիս*.

Նակի և բոլոր հանգամանաց բացարձակ հաւասարութիւնը, բնական դատողութիւնը կը պահանջէ՝ որ երկու Մովսէսը և երկու Սահակներ նոյն անձինքը լինին. զի դիւրին չէր երկու անուանակից թարգմանչաց զուգադիպութիւնը մի և նոյն ժամանակի մէջ. իսկ երկու անուանակից ու երիտասարդ Բագրատուննեացն ի միասին մի և նոյն տան մէջ՝ բոլորովին անկարելի։ Առով՝ Խորենացին իւր պատմութիւնը գրած կը լինի Սահակայ մահէն կամ 482 թուէն իրը 20 տարի յառաջ. այնպիսի ժամանակ մը՝ երբ նոյն ազնուականը զեռ սոսկ «Սահակ Բագրատունի» էր, և յետոյ պիտի դառնար «տէր Բագրատունեաց» կամ «ասպետ», շնորհիւ երիցութեան և իմաստութեան մարզպան եւս ընտրուելով ազգէն։ Այս հաշուով՝ Մովսէս շատ աւելի կանուխ գրած կը լինի քան զԼազար, որ իւր պատմութիւնը կը հասցնէ մինչեւ Վահանայ մարզպանութիւնը կամ 485 թուականը։

18. — Կը կրկնեմ, շատ բնականութիւն ու ներդաշնակութիւն կայ երկու պատմչաց այդ տեղեկութեանց զուգորդութեան մէջ. ոչ մի բռնազրօսութիւն, ոչ մի հակասութիւն կամ ապաժամութիւն։ Եւ Փարափեցւոյն տեղեկութեանց իրականութիւնը կը պահանջէ՝ որ նոյնպէս լինին Մով. Խորենացւոյն տուածներն եւս։ «Գիւմառնութիւն, կերպարանափոխութիւն», ըստ Մանանդեան (աստ' 61)։ Ի՞նչ դիւրին բան. և մի՛ թէ Ղազար եւս կերպարանափոխութիւնը բրաւ։ Դարձեալ այդ ճարտապահական ձեւով կարելի էր շարագրել՝ «Զինչպիսի՞ բանս ասէր Աղամ ելանելով ի զրախտէն», կամ «Զինչպիսի՞ բանս ասասցէ Յովսէփ վաճառելովն յեղբարցն», և ուրիշ մասնական նիւթեր¹. և այն ալ «ասէր Աղամ» և «ասասցէ Յովսէփի», ոչ թէ «ասէի ես Աղամ» կամ «ասացի ես Յովսէփի», ինչպէս ըսել կու տան Խորենացւոյն։ Խոկ այս աշխարհիս վրայ կարելի՞ է արդեօք կերպարանափոխութեամբ ապրիլ ամբողջ կեանք մը, և այնքան բարդ զգենուլ իւր վրայ Փարափեցւոյն Մովսեսի անձը. ի մանկութենէ մտնել Մեսրոպայ դպրոցը. ճանաչել անոր աչաց զանազան արտայայտութիւննը. հոգեով փարիլ անոր, տարիներով կենակցիլ. ապա առանց շարժելու տեղէն՝ անցնիլ ի Յոյնս, լեզու և պատմական հմտութիւն շտեմարանել իրապես. յետոյ դառնալ, հալածուիլ, տառապիլ, ողբալ, ծերանալ, հիւանդանալ, «անպարապ ի թարգմանութեանց» լինել, Ղազարայ Սահակ Բագրատունին բռնել երիտասարդացնել, բերել իւր ժամանակին, Հայոց պատմութեան մեկենաս շինել, խօսել, գովել ու կատակել անոր հետ, և զբել Ե դարու երկրորդ կիսուն պերճ լեզուն։

Եթէ ողջմուութիւնը ներէր՝ Խորենացւոյն կենսագրական ուժամանակագրական այդ բազմամասն ու ներդաշնակ օղակաւորութիւնը կեղծիք մը ցուցնել, եթէ իսկապէս հնարաւոր լինէր այդպիսի Մովսեսի մ'ետեւ գտնել տարբեր և անազանանձ մը, մեր այդ անձանօթը պիտի համարէինք շատ խելացի, Ե դարու պատմութեան մինչեւ ծուծը թափանցած մարդ մը, հանճար մը, մեծ դերասան մը, և շատ աւելի խորագէտ քան իւր պազարայ յարգելի քննազատները, անոնց այդքան տագնապ պատճառելու և իրարու դէմ ճակատեցնելու համար։ Եւ պիտի աւաղէինք զինքը, որ ուզած էր այդպէս զիմակաւորութիւն ու զրկութիւն իւր արժանի փառքէն, կեղծելով անունը կամ դարը, ինչ որ զինքն հաւասարապէս անձանօթ մը պիտի դարձնէր։

Բայց ո՞չ. բուն կեղծիքն այդպիսի կեղծիք մ'ենթազրելն է։ Խոկ Հայոց պատմութեան զրիչը նոյն ինքն Մովսէս Խորենացին է, մեծին Մեսրոպայ բազմերախաւաշակերտը, և Ղազարայ բառով՝ «լուսաւորիչն», որ հանճարին հետ զուզած էր սրբութիւնն ալ. և «մինչ դեռ էր ի մարմիի, ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից»². զոր պանծացուցին դարերը, և որ այժմ կը զառնայ վերստին իւր պատուանդանին

1. Գիրք պիտոյից. 511, 515 էջն. — 2. Փրաւ. 607.

վրայ, վայելելու Հայութեան մեծարանքն իւր մեծ գործին համար. մեծ իւր ժամանակին մէջ անշուշտ, — զի արժանիքներն համեմատական են ժամանակաց հետ, — մինելով արդիւնք տարիներով թափառմանց յաշխարհներ, և խուզարկութեան բազմաթիւ օտար աղբերաց, ուր մեր միւս պատմագիրը սոսկ իրենց ժամանակը տեսան ու նկարագրեցին դիւրութեամբ: Խոկ մեծագոյն՝ իւր նպատակին մէջ, յարուցանելու իւր ազգին ծագման և անցելոյն պատմութիւնն՝ որ զոյութիւն չունէր. և առանց զարմանք պատճառելու մեզ՝ որ անոր մէջ թերի թողուց ինչ որ ժիշտ — ի դարերն ի յայտ պիտի բերէին բեւեռազրերէ, պեղումներէ և անոր անմատչելի ուրիշ աղբիւրներէ: Խոկ իւր պատմագրի սեղմ, կուռ և ուժեղ զրիչը, որ սեպհական և անկապուտ հմայք մ'ունի, Ագաթանգեղոսի և Կորեան ուկեղէն փայլը կը նսենացնէ:

Պիտի ապրի Խորենացին՝ իւր այդ բազմաբիւտն վաստակը ձեռաց մէջ, իրրեւ պարծանքն իւր դարուն, և ոտից քով իւր «տգիտահալած» թարգմանութեանց դէզը, որով հարստացուց հայ գրականութիւնը: Խոկ արդի բնադրատութիւնը, տեղեակ կամ ոչ իմ այս զրուածին, պիտի շարունակէ անկասկած ցոյց տալ իւր նրբամտութիւնը, ցաշըշելով դարէ դար՝ ոչ պատմահայրը, այլ անոր ուրուականը. մինչ նա պիտի ժպտի անոնց, կանգնած իւր պատուանդանին վրայ՝ ուր զետեղեցին զայն իւր զործն ու դարերը:

19. — Կը կնքեմ բանախօսութիւնս, կը կնելով՝ որ իմ գործս հօս չափաւոր է և պատմիչ Խորենացւոյն հետ, ցուցնելու համար զրչին հարազատութիւնը, և զոր-

ծին վաւերականութիւնն ու ամբողջութիւնը, հանդերձ մանը ներմուծուրեամբ՝ որ եղեր են ժամանակի շրջանին մէջ: Ասով լուծուած կը լինի առեղծուածը, — եւ ալ կը ստիպուիմ կրկնել զայս, — որ զոյցաւ մասամբ մ'այդ եկամուտ կետերով, և մեծագոյն մասամբ իրրեւ պատմչէն կատարուած փոխառութեամբը յետնագոյն աղբիւրներէ, զոր հերքեցինք: Խորենացին չի կրնար իւր ողբին մէկ թելովը տարուիլ կապուիլ այս կամ այն զարուն հետ, երբ իւր Ողբն ամբողջութեամբ և Պատմութիւնն ալ մասամբ ողողուած են Եղարէն. և որով անոր առեղծուածը չի լուծուիր, այլ աւելի կը կնճռոտի: Լուծումը բոլորական լինելու է. և այն ժամանակ ուրիշ արդիւնք չի կրնար տալ՝ մեզ տուածէն զատ:

Տարբեր հարցեր են, ովք է այն Մովսէսը կամ Մովսեսներ՝ որ կ'երեւին առ Սահակ Արծրունի թղթոյն, Հոփիսիմանց պատմութեան, ներողին, Վարդավառի ճառուին և աշխարհագրութեան ճակատին, ու պիտոյից զրոց վերջարանին մէջ: Մեր անցեալը ցոյց կու տայ այդ անուամբ ուրիշ անձինք եւս, — որոցմէ զոմանս տեսանք վերեւ (63), — որ կրնան հեղինակ լինել նոյն աշխատութեանց, որոց ոմանք չափով մը, իսկ ոմանք բնաւ չեն յարմարիր Խորենացւոյն լեզուին ու զրչին: Մեր բանասէրը իրաւունք ունին ցրտնելու անոնց վրայ որբան կ'ախորժին. և հօն իրենց յոգնութիւնը պիտի արժէ արդարեւ:

Խօսուած Ա. Ղազարու ճեմարանին մէջ.

1935 - Տօն ս. Ղեւոնդեանց:

Հ. Վ. ՀաՅՈՒՆԻ

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՏԻՆԵԱՆ-ՀՈՌՍՒՀԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻՆ ՎՐԱՅ ԵՒ ԱՍՏԻՃԱՆ ԱՅԴ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ¹

Հ. ՈՒՄ՝ եւրոպական քաղաքակիրթ աշխարհամասի երկրակալը՝ այլազան քաղաքակրթութիւններն իրացնող և ձուլող լայնածաւալ կարողութիւնը կը պարտի իրեն գործնական և կազմակերպիչ հանձարին, արդարութեան ըմբռնումին, այն իրաւախոնութեան՝ որ աստիճանաբար, քայլ առ քայլ զարգացաւ ու զօրեղացաւ, գրեթէ շօշափելով հետզհետէ զանազան իրաւական լուծումներն և բանաձեւերը, միշտ հետամուտ ըստ կարի խուսափելու և նուազեցնելու ընկերային, տնտեսական և քաղաքական բախումները, ըլլայ ընտանիքները թէ ընկերային դասակարգերու և ժողովուրդներու միջեւ, ապահովելու համար անով իր սեփական կամքին՝ Հոռմէական միակ հեղինակութեան՝ տի-

րապետութիւնը բազմացել աշխարհի մը վրայ:

Այս այլացեղ աշխարհի ժողովուրդներուն մէջ կը գտնենք նաեւ Հայաստանը, իրեն գործնական և կազմակերպիչ հանձարին, արդարութեան ըմբռնումին, այն իրաւախոնութեան՝ որ աստիճանաբար,

Հետեւաբար, անտեղի չէ, այս պատկերի Համաժողովին մէջ՝ հետաքրքրութիւններ այն իրաւական ազդեցութիւններով՝ զորս Հոռմէական վրայ:

Յետ յիշատակելու համառօիւր քաղաքական ազգեցութիւնները Հոռմի դաշնակից և Հոռմէական գաւառ — Հայաստանի վրայ, պիտի ջանամ լուսաբանել օրէնսդիր Հոռմի ազդեցութիւնը Հայկական Օրինագրերու և Հայ իրաւունքին վրայ:

Ա.

Հայ ցեղը² յետ կտրելու փոխգական դաշտավայրը, շուրջ Է-Ե դարերը Ն. Ք., և նուաճելու Արարտու-Եայիրեան ծաղկեալ բաղադրակը թութիւնը, ինըն ալ իր կարգին նուաճուեցաւ Գարեհէն (521-426 Ն. Ք.) և կազմեց Արեմենեան թագին 13-րդ Սատրապութիւնը: Յետ անկման այս թագին՝ նախարարական երկու հզօր ընտանիքներ զատուեցան իրանէն և ինքնավար իշխաններ հոչակուեցան: Մակեդոնական կայսրութիւնը շանթի մը նման փայլատակութիւն աստղ՝ Ասիական կայսրութեան մէջ, որ բաղկացած էր աննման քաղաքակրթութիւններու անհարթ կուտակումէն՝ զինուորական բռնութեան ճնշումով, ուումբի նման պայթեցաւ և ճեղքեց զայն,

1. «Influsso del Diritto Romano-Giustinianeo sul Diritto Armeno e quantità di tale influsso» - *Acta Congressus Juridici Internationalis*, Vol. II, Roma, 1935.

2. Այս բանախօսութիւնը՝ (որու մասին ակնարկած էննը թերթիս Յոնուարի թուրին մէջ, 1935, էջ 29) իր ամբողջութեամբ Հայ մամոււին ներկայացնելու զիտումն՝ միայն կը հարաբակենը նաեւ պատմական այս Ասով առեղծուածը, որ թէն հանրածանօթ հայութեան, սակայն միջազգային ունկնդիրներու ընտրանիին համար անհրաժեշտ նախարարակը մ'էք՝ լաւագոյն լոյսի ներքեւ ցուցադրելու համար ձեռնարկուած ուսումնակարութեան բովանդակութիւնը: Մենք ԽՄԲ: